

Վորացի ճարտարապետութեամբ շինուած տաճար մըն էր նաև Միաբանութեան կոչուածը, որն որ մեր դրած պատկերին մէջ կ'երևնայ : Բայց անկէ շատ աւելի մեծագործ շէնք մըն էր՝ Սիմպեան Բրամադդայ տաճարը, որ երեք հարիւր քառասուն ոտք երկայնութիւն ունէր, վաթսուն լայնութիւն և հարիւր քսան՝ բարձրութիւն : Վեղեցիկ ախորժակով և արուեստիւ շինուած էին իր սիւները, գաւիթները և շէնքին ամբողջութիւնը : Տաճարին արևելեան կողմը նայող պատին վրայ Հսկայից պատերազմը ձևացուցած էր, և արևմտեանին վրայ ալ՝ տրովական մարտը, ճիշտ այն կերպով՝ ինչպէս կը ստորա-

գրէ Սիրգիլիոս՝ Հերայի տաճարին մէջ եղածը՝ ի Վարքեդոն : Վիոգորոս սիկիլիացի այս տաճարին գեղեցկութիւնը, համեմատութիւնը և արուեստը գովելէն ետքը՝ կ'ըսէ թէ անոր շէնքը անկատար մնաց :

Հռչակաւորն Եմպեդոկլէս այս քաղաքին մէջ ծնած է, և իր հանճարովը և ուսմամբ՝ պարծանք իր հայրենեացը : Եւանոթ է իր խօսքը՝ քաղաքակցացը համար, թէ Բարականդացիք անանկ կը վատեն զրամը՝ իբրև թէ ամենևին լմննալիք չունի, և այնպիսի մեծագործ և հաստատուն շէնքեր կը շինեն, որ կարծես թէ անոնց մէջ մշտնջենաւոր կեանք մը պիտի անցընեն :

Հ Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ճանապարհորդութիւն Պողիկտետի ի Հաովմ¹ :

ԹՈՒՂԹ Զ.

(Շարունակութիւն)

Վիմինալ և Կելեան լեռանց մէջ տեղն է Եսկուիլեան լեռը, որ ամենէն ընդարձակն է : Վերջապէս անմիջապէս քովք Տիբեր գետին անդին դէպ ի աջակողմը Աւենտին լեռն է, որ Աւենտինոս Սիլվիոս Աքայեցւոց թագաւորին անուամբը կոչուած է, և որուն գերեզմանը դեռ կը տեսնուի : Հոն էր ուր Հռեմոս անյաջող գուշակութիւններ առեր էր, երբ իր եղբորը հետ նոր հիմնած քաղաքին անուանակոչութեանը վրայօք վէճի եկաւ : Հռովմայեցիք երկայն ատեն չարագուշակ համարեցան այն տեղը ուր որ այս դիպուածը հանդիպեր էր, երբ Անկոս Մարտիոս թագաւորը լատինաց յաղթելով՝ այն տեղը իրենց բնակութիւն տուաւ : Ուրիշ շատ մահարձաններէ զատ կը տեսնես հոն Անահտայ և Յաղթութեան տաճարները : Աւենտին և Կապիտոլեան լեռանց մէջտեղը տեսն մը Վելապո ըսուած խորունկ ճահիճ մը կար, ուսկից նաւակով կ'անցնէին, լեռնէ լեռ երթալու համար : Տարկուինոսի Երիցուն ատեն, որուն թագաւորութիւնը այնչափ օգտակար աշխատութիւններով նշանաւոր եղաւ, այս ճահիճն ալ չորցուցին : Հիմա այն միջոցին մէջ երկու գեղեցիկ ճամ-

բաներ կան և խոր ու մեծ Վելապո կը կոչուին : Հոն է գլխաւորապէս ձէթ ծախողներուն բնակարանը :

Ամուր պարիսպ մը լայն խրամով մը հանդերձ, որուն երկու ծայրերը ի Տիբեր կը լմննան, այս եօթը լեռները կը պատէ, բաց ի Կապիտոլեան լեռնէն՝ որուն մէկ մասը միայն կ'ամփոփէ, նաև բերդին պարիսպներն ալ որ այս կողմէն քաղաքը կը սահմանեն : Այս փակը գրեթէ վեց Հռոմէական մղոնի շրջապատ ունի, որ մեր քառասունըութ սղատին կը համապատասխանէ, չսեպելով Յանիկուլոնը որն որ իբր քաղաքին յաւելուած մը կրնայ սեպուիլ : Աթէնք ալ գրեթէ նոյնչափ տարածութիւն ունի. բայց բոլորովին փակուած է իր շրջապատին մէջ, ուր Հռոմայ սահմանները անորոշ կրնան սեպուիլ : Կրօնական յարգութեամբ մը՝ Հռովմայեցիք ոչ երբեք ուղեցին իրենց հիմնագիրներուն դրած սահմանները ընդարձակել. այլ անցեր են զանոնք : Ինչպէս ոգիք մը որ խմորելով կ'եռայ, և առատանալով՝ ամանին մէջ չկրնար ամփոփուիլ, ասանկ ալ Հռովմայեցիք կամաց կամաց իրենց նախնական սահմաններէն անդին անցան :

Ո՛ր կողմէն ալ աչքդ դարձնես՝ ուրիշ բան չես տեսնար՝ բայց եթէ ճոխ տուններ, և փառաւոր պարտէզներ : Հռովմայ շրջակայքը զքօսանաց տներով կը ծածկուին, և քիչ ատենէն քաղաք պիտի գառնան : Հռովմայեցւոց գիւղային կենաց ունե-

¹ Տես Հտ. ԺԳ, եր. 110. Հտ. ԺԵ, 114, 146, 179 :

ցած ախորժը շատ ազդեցութիւն ըրեր է այս անհուն ընդարձակութեանը համար : Թէպէտեւ հակամէտ են ի փառասիրութիւն , բայց գեռ իրենց նախնեաց առջի զբաղմունքներուն ետեւ կ'ըլլան : Երբոր հռոմուլոս իր պղտի աշխարհքը իրեք ցեղի բաժնեց , և քաղաքացւոց իւրաքանչիւր գասին վերաբերեալ պարտաւորութիւնները սահմանեց , երկրագործութեան աշխատութիւնները միայն ազատ անձանց համար պահեց : Ան ատեն կրնային դաշտը մշակելով հռովմայ մէջ բնակիլ , և մշակք հոն արուեստաւորաց կարգը կը մանէին : Օր օրուան վրայ սահմանը մեծցաւ , և հետզհետէ տոհմերուն թիւը աւելցաւ : Սերուիոս Տուլլիոս քաղքին բնակիչները չորսի վերածեց , և գիւղաբնակիչները տասներեօթը : Գլխաւոր տոհմերը իրենց առջի վիճակը չմոռնալով՝ գնացին այս գեղջկաց ցեղերուն մէջ բնակեցան , որով անոնց առաւելութիւն մը տուին զորն որ ազնուական ցեղերը չեն կրցած ստանալ , և կը կազմուէին արուեստաւորներէ և ազատագիրներէ : Ժողովրդեան աճելովը ցեղերուն թիւն ալ շատցաւ , և ինչուան երեսունըհինգ ելաւ : Այն ատեն նորէն հանգիպեցաւ ինչ որ հանգիպեր էր առջի գեղջկական ցեղերուն հաստատութեան ատենը . բոլոր քաղքին մօտերը նոր քաղաքացիներով լեցուեցան , և աւելի հաշակաւոր հռովմայեցիները գացին հեռու ցեղերուն մէջ բնակեցան : Հոն իրենց զուարճութիւնն էր ցուցնել ամենուն այն փառասիրութիւնը որոնց մով շատ ազգաց գանձերը կը վառնին :

Այս կերպով հռովմ , իրեն չըջապատէն դուրս ելլելով , հետզհետէ անանկ ընդարձակութիւն մ' առեր է , որ օր մը տարակուսին պիտի մարդիկ , և ինչպէս որ հասարակապետութիւնը բոլոր ազգերը նկուն ըրեր է , քաղաքն ալ նոյնպէս կլներ է ան ամէն բանը որ իրեն մօտ կը գտնուէր : Այն յիսունուհինգ քաղաքներէն , որ երբեմն հռովմայ գիւղօրէքը կը ծածկէին , այսօրուան օրս և ոչ քար մը կը գտուի , այլ միայն անուննին մնացեր է¹ :

Բայց պէտք է խոստովանինք թէ միայն բաղդը չէ որ այս զարմանալիքը կը գործէ : Այն ժողովուրդը որ ծննդեան օրէն բոլոր մէկալ ժողովրդոց գէմ դրաւ անոնց հետ կռուելով , երբ անոնք զատ զատ և կամ իրարու հետ միաբանած պատերազմի ելան , և վերջապէս զանոնք ծառայեցուց , ալ աւելի խիստ սահմանադրութեանց հպատակ էր , տէր էր գիւցազնական քաջասրտութեան մը , և աւելի զօրաւոր և իմաստուն օրէնքներով կը կառավարուէր , որոնք վերջապէս զինքը յաղթական պիտի ընէին :

Խիստ զարմանալի են այն յարատեւ ճգունքը որոնցմով զհռովմ և ամբողջ Իտալիան այս փառաւորութեան աստիճանը հասուցին , ինչպէս որ հիմա կը տեսնես : Անհամար ճահիճներ ցամաք փոխուեցան , խորունկ լճեր լեցուեցան , և բարձր լեռներ դաշտի կերպարանք առին , հաստատուն թումբեր դրուեցան այնպիսի տեղերու՝ որոնք բռնութիւնը կարծես թէ յաւիտենական պատնէշներով բաժնած էր : Այս պատուոյ արժանի յիշատակարանները միշտ հռովմայ փառք պիտի ըլ-

լան . ետենէս եկող ազգերը անոր բարերարութիւնները վայելելով , փառասիրութեանը պիտի ներեն : Միթէ տիեզերաց հրամայելու արժանի չէ ով որ տիեզերաց փառացը համար կ'աշխատի : Ահա ասոնք են որ պատմիչք բաւականապէս չեն զուրցեր մեզի . մեզ պատերազմներով , ստէպ ստէպ յիշուած յաղթութիւններով կը յոգնեցընեն , և զանց կ'ընեն անոնց ազնուական հետեանքները նշանակելը : Հռովմ աւելի իրեն աշխատութիւններովը կը զարմացընէ՝ քան թէ աշխարհակալութիւններովը : Աւելի դժուարութիւն կրեր է բռնութեանը յաղթելու քան թէ բոլոր ժողովուրդները նուաճելու , :

— “ Ես ալ կ'իմանամ , ըսի Սիրոսին , թէ միայն իրենց հայրենեաց մէջ կարելի է հռովմայեցւոց վրայ ուղիղ դատաստան ընել : Քանի որ հեռուն ես , ամէն բան անոնց զօրութիւնը կը ցուցնէ : Իսկ հոս ամենայն ինչ անոնց մեծութիւնը կը հրուշակէ : Բայց ինծի հաւատա , որ այն ստեղծիչ հանձարը որ հոս այսչափ զարմանալիքներ գործեր է , այնպիսի տեղերու վրայ աշխատեր է , որ այնչափ խնամոց արժանի չէր : Տեսեր եմ հարաւային Իտալիոյ ճոխ բարձրաւանդակները , տեսեր եմ երջանիկ և արգաւանդ Վամպանիան : Հոն տեղը արգասաւոր բնութիւնը մարդկային ճգանց ձեռնտու կ'ըլլար , և հոն պէտք էր որ իրենց զօրութեան փառաւոր յիշատակարանը կանգնէին . վասն զի հոս ամէն բան բնութեան անարգաւորութիւնը կը յայտնէ : Անբեր երկիր մը կը գտնես ամէն գին՝ թէպէտ պալատներով լեցուն : Այդ գետը կապտագոյն ալիքներով կը հոսէ ձեռակերտ ափունքներուն մէջէն¹ : Երբեմն իրեն ջրերովը դաշտերը կ'ողողէ , և երբեմն իր աւազանը հատնելով հազիւ թէ պղտի նաւակներու նաւարկութեանը բաւական կ'ըլլայ : Թէ որ աչքս գետէն անդին տանիմ , այն բլուրները որ մէջերնին մուծ պարանոցներ կը ձևացընեն , աւելի որջերու կը նմանին քան թէ մարդկանց բնակարանի մը : — Հռովմայ գիւղքը , պատասխանեց ինծի , անոր հիմնադրաց արուեստէն առաջ կու գայ : Առջի հռովմայեցիք այս տեղս իբրու աւելի ապահով և աւելի անմատչելի ընտրեր էին : Այս լեռներս՝ լայն գետէ մը պաշտպանուած ըլլալով , և մանաւանդ աւելի անտառներէ և ճահիճներէ , որ հիմայ չկան , ապահով բնակարան մը դարձած էին այնպիսի մարդիկներու՝ որ աւազակութեւ համար հոն կը ժողովուէին : Ատ անձաւէն է որ անգլի պէս կը յարձրկէին իրենց դրացիները մերկացընելու , և հոն իբրեւ ապահովագոյն տեղ մը իրենց աւարը կը կրէին : Իրենց յաջողութիւնները առիթ եղան որ բոլոր Լատինի ժողովրդոց յանդուգն մարդիկները քովէրնին ժողովուեցան . և ասանկով օր օրուան վրայ բազմանալով աւելի մեծ ձեռնարկութեանց ետեւեղան : Արիութեանը յաջորդեց կատաղութիւն , աշխարհակալութիւնները յափշտակութեանց տեղը անցան : Հռոմուլոս իրեն քաջութեամբը¹

¹ Իրեն ջրերուն ճերմկութեանը պատճառաւ Albula (սպիտակ) կը կոչէին զայն : Տիբեր ըստ էության՝ որովհետեւ Տիբերինոս անունով մէկը ոգի է նէական ցեղէն կ'իջնար՝ մէջը խղդուեցաւ :

¹ Պլինիոս . գիրք Գ . գլ . 2 :

ճարակութեամբը կրցաւ իրեն կամացը համեմատ կառավարել այս ահաւոր մարդիկը . անոնց օրէնքներ դրաւ . և իրեն մեծ արգիւնքը հոն է որ այն օրէնքները անոնց սիրելի ըրաւ . իրեն յաջորդները հաստատութեամբ անոր գաղափարներուն հետեւեցան . և Հռովմ¹ որ ի սկզբան խառնիւղ անարգանքն էր , հիմա անոր փառքը եղեր է : Այն տեղն որ այս մեծ բանը սկսաւ , Հռովմայեցի ժողովըրդեան կերպով մը սուրբ սեպուեցաւ : Աստուածոց պատգամներն ալ ժողովուրդը աւելի այն տեղւոյն կապեցին . և թէպէտ այսօրուան օրս անոր իշխանութիւնը այնպիսի տեղուանք կը տարածուի ուր որ բնութիւնը աւելի կերպով մը իր գեղեցկութիւնը շռայլած է , սակայն անկարելի է որ Հռովմայեցիք համոզուին՝ իրենց բնակութիւնը և ընտանի աստուածները ուրիշ տեղ փոխադրել : Այս բանս սրբապղծութիւն մը կ'երևայ իրենց առջին , վասն զի Հռովմ¹ Աստուած մը սեպուած է ժողովրդեան առջին , և ունի իրեն տաճարները , քահանաները , իր պապներները , և այդ պաշտօնը իրեն որդւոցը ամենասիրելի պաշտամունքներէն մէկն է :

— “ Ո՛րն է , հարցուցի ընկերոջս խօսքը ընդհատելով , այն ընդարձակ դաշտը որ Վապիտուէան լեռան և Տիբեր գետին ձևացուցած անկեան մը մէջ տեղի միջոցը գրաւած է : Քիչ քիչ հեռաւորութեամբ մէկ քանի տաւանձին յիշատակարաններ կը տեսնուին . շատ մը մարդկանց բազմութիւն ալ որ հազիւ կը տեսնեմ , մեծ շփոթութեան մէջ կ'երևան . կարծես թէ հոն հանգէս մը կը կատարեն , :

— “ Արեսի դաշան է , պատասխանեց , որուն անունը միայն անոր ինչ բանի ծառայելը կը ցուցնէ : Հոն տեղն է որ Հռովմայ պատանիները պատերազմական արուեստին առջի փորձը կ'ընեն : Այս կերպով է որ Հռովմայեցիք կը յորդորեն իրենց տղաքը իրենց նմանելու , որով և դիւցազանց ցեղեր կը պատրաստեն որ անգագար իրենց հարքը կը գերազանցեն : Հոն ամէն բան հայրենեաց սէրը և պատւոյն զգածմունքը գրգռելու ոյժն ունի : Այդ յիշատակարաններն որ աչքիդ զարկին , կամ հռչակաւոր մարդկանց շիրիմներն են , և կամ անոնց փառաց համար կանգնած յաղթանակներ : Ատիկայ պատիւ մ' է որ Հասարակապետութիւնը միայն այն զօրավարաց կը շնորհէ որ պատերազմաց մէջ կը մեռնին : Իրենց շիրմին խորէն անոնց ստուերները կարծես թէ պատանիքը փառաց ու առաքինութեան կը յորդորեն , ցուցնելով անոնց ազնուական փոխարէնը : Աերջապէս Արեսի դաշան է ուր Հռովմայեցի ժողովրդեան մեծ ժողովները կը հաւաքուին : Քիչ մը ատենէ ատ ժողովը պիտի հաւաքուի , և դու ալ ականատես կ'ըլլաս . չեմ ուզեր անոր ազգեցութիւնը տկարացընել առաջուց զայն ստորագրելով քեզի :

„ Ան կղզին որ Տիբեր գետին մէջ կը տեսնես , Արեսի դաշտին և Յանիկուլոնի պարիսպներուն մէջ տեղը , «*Բեդա*» կըսուի , որուն սկիզբը գիտնալու արժանի է : Տարկուինիոսին հալածուելէն ետեւ , անոր երկիրները ամենէն աղքատ քաղաքացւոց բաժնեցին : Արեսի դաշտը միայն , զորն որ գրաւեր էր , պահեցին , և առջի վիճակը դարձուցին : Այս ընդարձակ երկիրը այն ժամանակը բոլոր ցորենով ծածկուած էր հնձուելու մօտ :

Ժողովուրդը անարժան սեպեց այնպիսի առաւելութիւն մը ի կիր առնելու որուն աղբիւրը ատենի էր իրեն . ցորենը կարեց , որայ կապեց և բոլորը Տիբեր գետը լեցուց , որուն ջուրը նոյն ատենը շատ նուազ էր : Այս սրայից շեղը ջրին բռնութեանը դէմ գրաւ , և անգագար շաղախով լեցուելով հաստատուեցաւ . որով բաւականապէս ընդարձակ կղզի մը ձևացաւ , այնչափ որ կրցան Ասկղեպիոսի տաճար մը կանգնել :

„ Այն կամուրջը ուսկից անցար , որ և այն կղզիէն քիչ մը անդին է , կ'ըսուի *Ծեւիւսի* կամուրջ¹ , վասն զի տարւոյն մէջ քանի մը անգամ ծերակոյտը անկէց կ'անցնի , որպէս զի երթայ քննէ՝ Սիբիլայից գրքերը , որոնք նախ Յանիկուլոն պահուեցան : Սկիպիոն Ափրիկեցին իրեն շինուածոց վերակացութեւն ատենը շինել տուաւ այս կամուրջը :

„ Հիմա պիտի դառնանք ի Հռովմ¹ , Սուպիկեան կամուրջէն անցնելով , որ Յանիկուլոնը՝ Աւենտին լեռան հետ կը միացընէ . և այս ետքի լեռանը չորս դին պտրտելով , կը տեսնես բոլոր այն առարկաները որ ետեւը ըլլալնուն հիմա չես կրնար տեսնել , :

Լեռանը գագաթէն ինջնալէն ետեւ , Տիբեր գետը անցանք , և անոր ընթացքին հետեւելով սգափի մը չափ , Հռովմայ պարիսպներէն ելանք : Այն տեղին մօտ որ պարիսպները գետին կը մօտենան , կը գտնուին քաղքին աղի համբարանոցները : Աղին վրայ տուրք դրուած է , և անկից առաջ կու գայ Հասարակապետութեան եկամտից մէկ մասը : Անկոս Մարտիոս առջինը եղաւ որ այսպիսի հարկաւոր բանի մը վրայ տուրք դրաւ . իսկ երբոր թագաւորաց իշխանութիւնը մերժուեցաւ , այն հարկն ալ վերացին . ինչուան Մ . Լիւիոս համարակալին ատեն , որ նորէն հաստատեց այն տուրքը , և ժողովուրդը վրէժը առնելու համար Սուպիոսի կողմէն զինքը :

Քաղաքին արտաքին չորս կողմը պտրտելու ատեննիս՝ զարմացմամբ կը զննէի այն ամուր պարիսպները , տեղ տեղ աշտարակներով զարդարուած , որոնց մօտենալը անկարելի է լայն խրամի մը պատճառաւ : “ Այդ պատենէշներն որոնց վրայ կը զմայլիս , ըսաւ Սիրոս , իրականէն աւելի տհաւոր են : Գաղղիացիք դիւրութեամբ զանոնք անցան , և հաւանական է որ Աննիբալ ալ նոյն բաղդը կ'ունենար թէ որ փորձելու համարձակէր : Յիշէ որ Սպարտա , բոլորովին անպարսպ , երկայն ատեն անյաղթելի եղաւ , իսկ Պիրէոնի պարիսպները Աթէնքը չկրցան ազատել : Բուն պատերազմական ազգի մը ամուր պարիսպները իր քաղաքացիքն են . կ'արհամարհէ այն չըջապատները ուր տկար ժողովուրդներ փակուելու կը ջանան . աւելի աշխատութիւն կը կրեն զանոնք շինողները , քան անոնք որ արհամարհելով զանց կ'ընեն : Հռովմայ չըջափակը աւելի իրեն առջի տկարութիւնը ցուցնող է քան հիմակուան ուժը . Հռովմայեցիք աւանդութեամբ կը պատուեն զայն , և ոչ թէ ազատութեան և անկախութեան յոյսերնին անոր վրայ դրեր են :

„ Ահա հիմայ Ոստեայ ճամբուն վրայ ենք .

¹ Լատ . Senatorius.

միտքդ բեր այս տեղուանքը : Անկէց է որ Հռովմ հասար : Կապենեան գռնէն քաղաքը պիտի մրտնենք , որ այս գռնէն ետքը կու գայ : Անոր համար քեզ ինչուան հոն է՞ ուզեմ տանիլ որ Հռովմայ արժանաւոր յիշատակարան մը ցուցնեմ , որ աւելի յարգոյ է քան թէ քարերու սնոտի կոյտերը : Անհամբերութեամբ կը սպասէի տեսնելու ինծի խոստացուած տեսարանը , և աչքս հետզհետէ կը տանէի առջևս ելած տաճարներու և պալատներու վրայ : Սիրոս հարցմունքներուս վրայ կը ժրպտէր . վերջապէս ինծի ըսաւ . “ Կը տեսնես ահաւասիկ Ապպեան ճամբան : Թերևս այնպէս մը երևնայ աչքիդ թէ համեմատ չէ այն դաղափարներուն՝ զոր ազդեցի քեզի : Հասարակաց օգուտը միայն մտածելով , կրնամ ըսածս արդարացնել : Բայց Ապպեան ուղին այս տեսակ շինից մէջ այնչափ վեր է , որ հասարակ լեզուէն խոսորելու է զանկիայ ստորագրելու համար :

“ Դիտէ ի՞նչ կերպով շինուած է . ժայռի կտրուանքներ , մարմարիոնի կարկառներ՝ որոնք երևակայութեամբ իսկ հաղիւ կրնանք խորտակել , լեռներէն հոս բերուեցան . հարկ եղաւ զանոնք կտրտել , յաւիտենական հիմերու վրայ նստեցնել , արուեստով պատրաստած շաղխով միացնել , և պղնձէ լարերով զանոնք իրարու կապել , հալած կապարով ամրացնել բոլոր այս մասերը , անշարժ ամբողջ մը շինելու համար : Ո՞ր մարդկային գործ կրնայ ասկէ աւելի շէնքի անուանը արժանաւորիլ : Այս ճամբան Հռովմայէն Կապուա կը հանէ , և Կապուայէն՝ ի Բրուճդիսիոն . 2800 սդառի միջոցի մէջ շատ ճահիճներ կան որ մարդկային ճգանց անմատչելի կ'երևան : Հռովմ այս հսկայակերպ շէնքին համար պարտական է Ապպիոս համարակալին , որ Կոյր մականուանեալ է : Դարերը կըրնան զայն խախտել , սակայն մնացորդքը յաւիտենական պիտի ըլլան . գալի աղգաց պիտի ցուցնեն թէ ի՞նչ էին Հռովմայեցիք , ինչպէս Հոմերոսի երես մը քերթուածն ալ պիտի ցուցնէ թէ ի՞նչ էին Յոյնք :

“ Այդ շիրիմները որ իրարմէ հեռու կը տեսնես , Հռովմայ ամենէն ազնուական ընտանեաց կը վերաբերին . իւրաքանչիւրը իրեն առանձին գերեզմանը ունի : Սրբապղծութիւն կը սեպուի եթէ մէկը ուրիշ ընտանիքի մը շիրիմը առնու գործածէ , և ո՞վ որ ատ յանցանքը ընելու համարձակի , ծանր պատժոյ տակ կ'իյնայ : Նոյնպէս արգիլուած է ժառանգական շիրիմները ծախել կամ օտարացնել : Անոնք որ շինել կու տան՝ միշտ իրենց ժառանգներուն պարտք կը դնեն որ զանոնք իրենց ամբողջութեանը մէջ պահեն , ապա թէ ոչ մասնաւոր տուգանք դրուած է վրանին , զոր պարտական են հատուցանել քրմապետաց գանձանակին :

“ Մասնաւոր շէնքեր ալ կը նկատես հոս որ պարզապէս յիշատակարան կամ մահաբնէ կը կոչուին , և գերեզմաններէն ասով կը զանազանին , որ մեռելոյն աճիւնը մէջերնին չգրուիր . այլ անոնց յիշատակին համար կը կանգնուին . իրենց առարկան նոյն մեռնողն է , ու անոր անուանը յիշատակը մըջ տընջենաւորելու համար որոշուած :

“ Բայց դու հանգչելու կարօտութիւն ունի . փութանք Կելեան լեռնէն անցնիլ , և Սուպուրեան ճամբուն մէջ ձգել ինքզինքնիս : Իրիկունը հասնելու վրայ է . առողջարար հանգստեամբ մը ուժդ նորէն ստացիր , ու գիշերուան մթուն մըտքէդ անցուր բոլոր այն առարկաները որ մտացդ վրայ տպաւորութիւն մը ըրին : Հռովմ տեսնողը երկար մտածելու նիւթ ունի :

Կը շարունակուի :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՅՔ

Լ՛մէն յաճախ եղած բանը , շատ գործածելով անարգելի կ'ըլլայ . ամէն քիչ եղած բանը՝ աւելի սիրելի կ'ըլլայ սովորաբար : — Լ՛մէն բաղձալի բաները աւելի սիրելի կ'ըլլան , քան թէ միշտ ունեցածները : — Ո՞ր բանն որ անգործածելի է և չընելու է , անիկայ բազմութեան մէջը կարծես թէ յարգի է : — Սարդուն սիրտը թէ որ սիրած բանը ձեռք չկրնար բերել , անոր փափաքովը աւելի կը բորբոքի :

Լ՛անի մը սովորութիւնը՝ բնութիւն եղած է : — Օրաւոր բան է սովորութիւնը , վասն զի բնութեան կը նմանի : — Եմ տեսնար թէ ի՞նչ օգուտ կ'ընէ ուսումը առանց բանական խելքին , և ոչ խելքը առանց ուսման . վասն զի մէկը մէկալին կարօտ է :

Ո՞վ որ քիչին գոհ չէ , շատ հեղաւմենւին բան չունենար :

Լ՛առողջութեան պատճառը՝ ժուժկալութիւնն է , հիւանդութեան՝ առատութիւնն է : Բիչ ու չափաւոր կերակուրը՝ մարմնոյն ու հոգւոյն պիտանի է : — Սկրատայ վրայ շատ չափաւորութիւն տեսնուեցաւ , և ասոր համար բոլոր իր կեանքին մէջը ամենւին տկարութիւն մը չգգաց :

Կեանքերնիս շատ կարճ է , ուստի պէտք է որ խելօք ու զգուշութեամբ գործածենք՝ աղէկ ու ինչպէս պէտք է ժամանակը գործածելով :